



Պ Ի Ո Ս Ժ Ա.

Մեծ սուգի օր եղաւ Փետրուար 10 կաթողիկէ աշխարհին ու հանուր քրիստոնէութեան համար. Վատիկանի անթելի կայեանը կը ծանուցանէր նոյն օրը Պիոս ԺԱ. Քահանայապետի մահուան լուրը ամբողջ աշխարհի: Դարուս մեծագոյն դէմքերէն մին կը հեռանար դէպի յաւիտենականութիւն՝ հաւատացեալներու ջերմ ու եռանդուն աղօթքներով: Մեծ եղան հանգուցեալ Քահանայապետի արժանիքները մարդկութեան ու առանձնապէս իւր հօտին համար. մեծ եղաւ նաեւ այն ցաւը, զոր յայտնեց գիտակից մարդկութիւնը անմահութեան անցնող գորովագութ Հօր ետեւէն: Միլիոնաւոր հոգիներ պլպլացող մոմերու լոյսով ու ծխացող բուրվառներու խնկով իրենց սիրոյն ու անվերապահ անձնուիրութեան թանկագին նուէրները բերին արցունքների մէջ՝ հանգուցեալ Հօր յիշատակին: Անկեղծ ցաւակցութեան զգածումները ամէն կողմէ, ամէն դաւանանքէ ու կրօնքէ՝ վերջին անգամ մըն ալ պարզեցին այն խոր յարգանքն ու գնահատանքը, զոր գտած էր ծերունի Քահանայապետը շնորհիւ իւր անդուլ աշխատանքին նաեւ անոնց քով, որոնք իրեն հօտին չէին վերաբերեր: Անգամ մը եւս կ'արտայայտուէր դրապէս մարդկութեան մեծ ընտանիքին մէջ զիրար հասկնալու, իրարու գործակցելու պէտքը, որուն ձգտած էր անձնուէր Պիոս ԺԱ. իւր գահակալութեան ամբողջ տեւողութեան:

Աքիլէ Ռատտի, որ իբր Պիոս ԺԱ. կոչուած էր Կաթողիկէ Աշխարհը կառավարելու, կը սերէր համեստ իտալացի ընտանիքէ, ծն. 31 Մայիս 1857, ի Դիգօ, Միլանի մօտ: Կը ձեռնադրուի քահանայ 20 Դեկտ. 1879: Մատենադարանի ճիւղը մասնաւոր հրապոյր մը կ'ունենայ անոր վրայ ու յաջորդաբար Միլանի Ամբրոսեան ու Վատիկանի մատենադարաններու մատենադարանապետ կը կարգուի: Այսպէս եռանդուն ու հմուտ քահանան լայն հնարաւորութիւն կ'ունենայ գիտական պրպտումներ ընելու ամէն ճիւղի վրայ: Այդ առթիւ երեւան կը հանէ նաեւ հայերէն երկու գիրք՝ Աբգարեան տպագրութենէն Սաղմոսարան մը (1585) եւ «Խառնափնիթուր Տօմար»:
Համաշխարհային պատերազմի վերջաւորութեան Առաքելական Նուիրակի պաշտօնով կ'երթայ Լեհաստան. 1921ին կը յաջորդէ Միլանի արքեպիսկոպոսին, սակայն տարի մը հազիւ անցած 6 Փետրուար 1922ին կ'ընտրուի Ս. Պետրոսի յաջորդ:



† ՊԻՈՍ ԺԱ.

Պիոս ԺԱ. բարձրանալով Բենեդիկտոս ԺԵ.ի գահին վրայ շատ ծանր Ժամանակ մը կաթողիկէ մեծ Համայնքին ղեկը ձեռք կ'առնէր. — Պատերազմ դադրած էր ռազմադաշտի վրայ, բայց պատերազմ կը շարունակուէր հոգեկան ու բարոյական աշխարհի մէջ, Ժողովուրդներու կեանքին մէջ: Չորս տարուան թունալից ատելութիւնը խոր հակադրութիւններ ստեղծած էր Ժողովուրդներու, դասակարգերու, ընտանիքներու ու անհատներու միջեւ. եւ կրօնն էր որ պէտք էր կամրջել այդ բոլոր անդունդները ստեղծելու համար հասկացողութիւն ու համերաշխութիւն: Պիոս ԺԱ., սիրոյ կրօնի պետը, խաղաղութեան առաքեալն եղաւ միջնորդելով ատելութիւններու ու Ժողովուրդներու միջեւ, հնչեցնելով իւր ձայնը դասակարգներէն ու ընտանիքներէն ներս: Խաղաղութեան այդ բուն կոչին թանձրացումն էր Լատերանեան դաշինքը, որ վերջ կ'ու տար Ս. Գահին ու իտալական արքայական տան միջեւ եղած անհաշտ վիճակին՝ զիջելով դարաւոր իրաւունքներու: Սոյն հոգևով փութաց Պիոս ԺԱ. Ս. Գահի յարաբերութիւնները ճշդել եւ դաշնագրերով ամրացնել այլ եւ այլ պետութիւններու հետ, որպէս զի Եկեղեցին իւր դաստիարակիչ ու կրթիչ դերին մէջ չընդհարէր քաղաքական իշխանութիւններու հետ եւ անխափան ճառագայթէր Ժողովուրդներու վրայ սիրոյ եւ խաղաղութեան ուղիները: Նոյնքան բազմաձիւղ ու խոր էին կրօնական շարժումները, զոր արթնացուց կաթողիկէ խաւերու մէջ զրական գործունէութեան մղելով գանոնք: Մեծ Քահանայապետին արդիւնքներէն մէկ կարեւորն է կաթողիկէ մամուլի ծաւալումը, որով մասնաւորապէս կը հետաքրքրուէր: Առանձինն խնամք տածեց սակայն Արեւելեան Եկեղեցիներու: Տառապած հայ Ժողովուրդը մանաւանդ ունեցաւ Պիոս ԺԱ.ի սրտին մէջ նախապատուեալ տեղ. մեր որբերուն ու որբուհիներուն շոյլած գորովը, մեր ազգին ցուցուցած դուժն ու զնահատանքը, մեր Նուիրապետութեան ընծայած այն ջերմ հետաքրքրութիւնը ու պարգեւած լայն նպաստները, որոնց կարգին Բէյրութի հայ կաթողիկէ Պատրիարքարանը, պիտի արդարացնեն կոչել Պիոս ԺԱ. հայասէր Քահանայապետ:

Այսօր խոնարհած մեծ Քահանայապետին շիրմին առաջ որդիական երախտագիտութեամբ ու ցաւով՝ կը հայցենք իր բարեխօսութիւնը աշխարհի ու մեր հալածուած ազգին վրայ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
ՀՍՍՌ-ԱՐՄ ԳՐ

531-66